ասոնք ալ Եզովբոսին խեչեփարը կդառնան. այնպէս կծառայեն աւետարանին՝ ինչպէս իրենց հայրերը. Ծուռումուռ կը-քալեն իրենց հօրը շիտակ քալելը բնաւ չտեսնելնուն համար. եկեղեցւոյ պէտքը բնաւ հոգերնին չը լլար, այլ ծիծռան և խորդոյ պէս օր մարմանդ որ իրենց կազ-մուածքին յարմարի՝ հոն կվազեն։ Անկարգութիւն մը ուրիշ անկարգութիւնով կրնայ պատսպարիլ, եթէ ուզուի։ Ասանկ օրէնք մը կայ՝ որ ամեն կրօնաւոր մէկ վանքի մը եղբայրութեան անդամ ը լլայ. ասոր համար եպիսկոպոս մը եթէ կրօնաւոր մը եկեղեցական ձեռնադրէ, ուզած վանքին եղբայր կանուանէ իւր ձեռնադրածը։ Ամենաշու վանքը այս կերպ շատ մը եղբայրներ ունի, որոնց ոչ երեսը տեսած է, և ոչ ի՞նչ ը լլալը գիտէ, եղբայրներ՝ որ վանքին դուռը օր կողմէն բացուիլն անդամ չեն գիտեր։ Մենք այս շինծու եղբայրները ի՞նչ օրէնքով եղբայր պիտի ճանչնամք, չենք գիտեր։ Աւետարանի պատանիները չե՞ն ասոնք՝ որ վանական ընկերութեան եղբայր ը լլալ կուզեն առանց անոր ամեն պայմանները գիտնալու, Եկեղեցւոյ ուխտաւորութեան ժառանգաւոր ը լլալ՝ առանց աշխարհական կապակցութեանց թելը ձեռքը ձգելու. մէկ խօսքով, անձնուրացութեան պատրուակաւ անձնասիրութեան ամենէն յաջողակ ճամբան ձեռք առնել չէ՞ ասիկա. տեղը չէ՞ ուրեմն ըսելու՝ թէ ասեղին ծակէն հաստ պարան մը անցնի նէ՝ ասոնք ալ այդ խելքով կրօնաւոր կրնան ը լլալ։

(Շարունակելի տես Թիւ Ա. երես 9)

ՊԱՏՄԱԿԱՆ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՄԱՇԻՆՈՑ ՎԱՆԱՑՆ

Ի ՇԻՐԱԿ։

(Շարունակութիւն տես Թիւ Ա. երես 9)

Տեղագրութիւն Հոգեվանք անուանեալ Հայակապ Եկեղեցի՝ է մերձ ի Սօկրթլու գեղջ յարևմտեան հովիտս ստորոտին Արագածու լերին ի ձորամէջ վայրի ի գաւառին Շիրակայ. կառուցեալ փառահեղ կաթուղիկէիւ կոփածոյ ցարդ ամրողջ ի վերայ առուին, որ գայ ի գեղջէն, և խոտորեալ ի Հիւսիս, գնայ եկանէ ի Բողաղբեասան կոչեցեալ գիւղ ի նոյն գաւառի. և է հեռի ի Սօկրթլուայ՝ գրեթէ մի ժամ հեռաւորութեամբ, ի լանջս արևմտեան գոտեաց մեծի լերինն, զերևս յարևելս ունելով։

Եկեղեցին Հոգեվանք կոչեցեալ յարձանագիրս իւր՝ է անսիւն՝ հաստատեալ կաթուղիկէն ի վերայ կամարաց չորից որմասեանց. որք են երեք բոլորակք միակցուրդք ձևացեալ յորմն ի վեր մինչև ի չորեսին անկիւնաւոր վերնախարիսխն ի ներքոյ կամարացն, յորոյ վերայ և կամար մի բոլորակ կողմնակի անկեալ. ունի ի վերայ՝ զմբէթն չորիւք լուսամուտք։

Արտաքին երևոյթ զմբեթին է միանման անզարդ բոլորակ՝ կարմիր քարամիք. բայց յեղերս գմբեթայարկին՝ քանդակազարդ սեւերանգ գործեալ. իսկ յարկ նորա՝ խորշ խորշ քարամիք բարձրացուցեալ մինչև ցղլուխն. ուր փոքր մի առ հնութեանն՝ երևին հետք աւերանաց և առանց խաչի, այլ ի ներքուստ կարի ամրողջ։

Ունի տաճարն զմի սեղան հանդերձ խորհրդանոցիւ, և զերկուս խորանս յաջմէ և յահեկէ նորա. չորս այլ ևս ի չորից կուսէ եկեղեցւոյն են լուսամուտք ի ներքուստ լայն ձևացեալք, և արտա-

քուստ նեղսագոյն՝ բարակ և երկայն. 'ի շորեսին ոտնունս նորա արտաքուստ են երկու երկու խորշք կիսաբոլորակ կամարօք փոսացեալք յորմն, որոց նմանք տեսանին յոմանս յեկեղեցիս ստորագրեալս 'ի մէջ. Հարաւային որմն նորա խոնարհեալ է արտաքուստ. այլ ըստ ներքին մասանց ամբողջ ըստ ամենայնի։

Զերկուս դրունս ունի յարևմտից և 'ի հիւսիսոյ՝ կիսով չափ թաղեալ 'ի փլուածն, որպէս և միջին յատակ եկեղեցւոյն. յորում ճակատք դրանց խորանացն միայն երևին. ընդ որս մարդիկ 'ի ծունկս անկեալ հաղիւ մտանեն. Ի ճակատս երկուցն ևս դրանց զոն փիսաւոր և ընդարձակ յիշատակաց արձանագիրք 'ի վերայ միակտուր և կիսաբոլորակ քարանց 'ի ներքոյ կամարաց դրանցն. յորոց և հիւսիսայնոյն յիշատակարան ունի զթուականն 'ի գլուխ գրոցն ըստ այսմ. Թ. ԾԳ. Ա՚Լ արձանագրութիւնքն բովանդակ գրեթէ եղծեալ յանօրէն ձեռաց. փորելով զտառսն մեծ մասամբք՝ 'ի տողաւերջս, որպէս 'ի ներքոյ։

"Ի տէրութեան . . . . . .
Ոտ Վարդան . . . . . .
տ է ր ե ծ . . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . ."

Իսկ 'ի վերայ արևմտեան դրանն արձանագրի՝ գտաւ և անուն վանացս և նորին Առաջնորդի՝ գուցէ 'ի շինութեանն. և ընթերցաւ ինչ ինչ յեղծեցելոցն՝ 'ի միջակայրին. օրինակ զոյս։

" . . . ի հոգեվանքս . . .
յառաջնորդութեան հաւր Գէորգայ
տարին գ. պատարագ . . . "

Յորմն արևելեան հարաւոյ գրի արձանագիր անվերծանելի։

Տեղագրութիւն Սէօղի-ղեղ անուանեալ գեղջ, և որ առ նովաւ Լարտայրին հուշակեալն 'ի Շիրակ։

Սէօղի-ղեղ (հին անունն անյայտ) գիւղ 'ի դաւառին Շիրակայ՝ անկանի յարևմտեան ստորոտս լերին Արագածու ընդ կողմն Շիրակայ հարաւային մասին լեռնամէջի. յորում արևմտեան և արևելեան ըստ ուրբ տարածին ագռաղոսեալք մինչ ցհարաւային եզերս դաշտավայրաց գտաւին, որոց ծայրք սկզբնաւորին 'ի հարաւային արևմտեան ստորոտէ լերինն. յոր մերձ են Ասիեանան և Մաստարայ 'ի հարաւոյ այսր գեղջ։

Գիւղն կարի ընդարձակ անկեալ 'ի լանջս արևելեան ըլրակին կցորդ եղելումն աղիսաղիք ըլոց, որք ձևացուցանեն զերկայնակոստ լեռնադաշտս արտատեղեաց նոցա. աստանօր 'ի վեր ընդ փոքրիկ ձորակ ըլրակին 'ի բարձուէ գեղջն, է քարայրն մեծ, զոր շրջապատեն մեծամարմին կարմիր քարինք, յորում և ըղիսէ աղբիւրն ականակիտ ընթանալով խոխոջմամբ ընդ գիւղն 'ի վայելս դիւղականացն և յարբումն անդաստանաց նոցա։

Այսմ Քարայրի զանուն տան բնակիչքն՝ Լուսաւորիչ, առ գոլոյ 'ի քարինս ոմանս 'ի նմին՝ ձևակերպութեանց խաչաց անտաշ և բիրտ փորուածովք. 'ի միջակիտի քարայրին կանգնեալ են վեց թզաչափ բարձրութեամբ բոլորշի քար սիւնաձև, յոր մածուցանեն զմոմ՝ վառեն և խունկ առ նոսին ծխեն. իբր թէ Լուսաւորիչն Գրիգոր անդ իցէ աղօթեալ կամ ճգնեալ. յորում դնք առաւել բնակին քան Լուսաւորիչն. յոյր սակս և 'ի ներքոյ խաչին որ փորագրեալ 'ի վերայ սեպացեալ ապառաժին կախելոյ զոյիոյ սիւնակին, յետինք առ խարրալեալոյ (զբնակիչսն) զոամիկն, փորագրեալ են սուրբ գրիգոր անուն անարհեստ գրչաւ։

Մինչև ցեռը Հայաստանեայք կուրօրէն այսպէս զհաստատուն հաւատս քրիստոնէութեան նսեմացուցանեն 'ի քարինս և 'ի ծերպս քարանձաւաց, ըստ թոյլտուութեան Առաջնորդաց, և 'ի հնարաւոր անձնական շահուցն պէտս, զորոց զգործս ահա՛ նս լռեմ։

Տեղագրութիւն Մակարայկուղեցեալ վանացն, առ երկ Մահմուտաղ առասեալ գեղջն 'ի հարաւային մասին Շիրակայ։

Մակարայ վանք կոչեցեալ մենաստան գոլով 'ի վերոյ քան զՄահմուտաղ գիւղ 'ի ստորոտս Արագածու յոտն ձորակին որ 'ի հովտացն իջանէ

ընդ զառիվայր գեղջն, է կառուցեալ կոփածոյ քարամբք զմենթայարկ վայելուչ կերտուածովք. Եկեղեցին ունի զմիջին լայնութիւն տասներիք քայլ, և զերկարութիւն՝ տասնեւինն. և զերկուս խորանս կից սեղանոյն յաջմէ և յահեկէ նորա։

Կից արեւմտեան դրան տաճարին՝ է փոքրիկ ժամատուն, ոյր որմն հիւսիսային կողման միայն երեւի կիսով չափ, իսկ ամբողջ շինուածն հիմն 'ի վեր տապալեալ։

Յորմունս տաճարին գտան ինչ ինչ արձանագիրք որ եղծեալք և որ անվերծանելի, յորոց զայսչափ և եթէ եղև հնար առնուլ 'ի գիր։

Ի ծակատ արեւմտեան դրանն։

"Կամաւն Աստուծոյ ես Եղբայր անուն եստուզիմ հայրենի այգին, զԴանիէլեանց հողն որ յԱղին տան 'ի սուրբ սիօն Մակարավանից յառաջնորդութեան Վարդանայ և տէրութեան տեղւոյս Յովհաննէս միակեցի. և սպասաւորք սուրբ ուխտիս սահմանեցին յամեն տարի պատարագել Զ. օր. նոր կիւրակէին շաբաթ աւրն Գ. ինձ. և աղաղուանն աւր Գ. եթէ որ 'ի մերոց կամ 'ի յաւտարաց խափանէ, պատժին յԱստուծոյ. կատարիչքն աւրհնին 'ի Քրիստոսէ"։

Ի ծակատ արևելեան խորանին։

"Ն՝Օ թուականութեանն Հայոց 'ի Հայրապետութեան տեառն Սարգսի Հայոց Կաթուղիկոսի. և 'ի թագաւորութեանն Գագկայ Շահանշահի, ես Սահակ հայրապետ . . ."

Յեկեղեցոյ խորանին 'ի վերոյ արեւելեան որմոյն արտաքոյ։

"Կամաւն Աստուծոյ ես հայր Վարդան եղէ . . . հին շինութեան սուրբ ուխտիս, և բազում աշխատութեամբ շինեցի զվանքս. աղաչեմ զընակիչդ զիս և զծնողս յիշեցէք 'ի տէր"։

(Ա՝նայսորդն է յաջորդ անտապիրս։)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԻ ԴՐՈՒԹԻՒՆՔ

ԹԷ՝ Ի՞ՆՉՊԻՍ ՊԻՏՔ Է ՊԱՏՐԱՍՏԵԼ ՄԱՆԿԱՎԱՐԺ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ։

1.) Սկզբնական ուսումնարանների վարժապետները կամ մանկավարժ ուսուցիչները պէտք է առաջ գան ժողովրդի սորին կոչեցեալ դասերէն, այսինքն՝ գիւղականաց, շինականաց, ստորին վաճառականաց կարգութիւնէն։ Սակայն իւրեանց կրթութեամբ այդ դասերէն բարձր և գերազանց պիտի լինին, որ կարողանան իրաւի [illegible] կոչուիլ։ Պէտք է նոցա մէջ պահպանել իրրև զանձ իւրեանց ժողովրդական բնաւորութիւնը և բարի յատկութիւնքը, որ նոցա բռնած դրութիւնը լինի [illegible] ստորին կամ անկիրթ դասի՝ և վերին կամ լուսաւորեալ հասարակութեան մէջ տեղը։ Ահա այսպիսի հայեացքի կէտէն պիտի դուս դոյ ամենայն կարգադրութիւն սկզբնական վարժապետաց վերաբերեալ. եթէ ոչ շատ սխալանաց և ափսոսանաց տեղիք կը տրուի։

2.) Ուսուցչաց կրթութիւնը պէտք է ընթանայ ամբողջ ազգային կեանքի հեղեղի հետ, և պէտք է լինի իւրեանց ազգայնութեան, իւրեանց դարու՝ գիտակցութեան, ձգտմանց և լուսաւորութեան արտադրութիւնը, նայելով թէ՝ այդ ազգայնութեանը՝ այդ դարու մէջ ինչպիսի ուժեր են հարկաւոր, հետևելով միւս կողմանէ արդէն ընդունած բարձր դաստիարակութեան կանոններին։

3.) Ուսուցիչներ պատրաստելու ժամանակ պէտք է անհրաժեշտ 'ի նկատի ունենալ, թէ՝ ազգային ուսումնարանը ժողովրդի օրպիսի տեղական և ընդհանուր կարօտութիւններին պիտի դարման տայ, և թէ՝ նախակրթական ուսուցիչն է՝ այդ պիտոյքներին համեմատ կրթութիւն և լուսաւորութիւն ծաւալողը և ժողովրդի անմիջական խորհրդատուն։

4.) Ուսուցչի այսպիսի բարձր դրութիւնը, որպէս դաստիարակ և կրթիչ ժողովրդի, կը պահանջէ նորանէ բաց 'ի անձնուիրութիւն ևսէր առ իւր վեհ